

1(25) 2012

ՀՏԴ 07+008

Հրագրություն

**ՄԾԱԿՈՒԹԱՅԻՆ ԲԱՆԱՎԵՃԵՐՆ ԱՐՑԱԽԱՆ
ՊԱՐՔԵՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ**

Շ. Ռ. Ասկարյան

Ավելի քան երկու հարյուր տարվա պատմություն ունեցող հայ մամուի գրյության ընթացքում ուշադրության կենտրոնում միշտ ազգային կյանքի հիշարժան դեպքերի ու իրադարձությունների համակղմանի արձանագրումն էր, որոնց ծևակորման, զարգացման ընթացքում, բնականաբար, նդել են նաև բանավեճեր ու բանակոփներ: Մշակույթի ոլորտն հանդիսանում է բազմաշերտ ու նպատակահարմար հարթակ ոչ մեկնողական տեքստերի ծավալման ու շիկացած գրական-բանավիճային մթնոլորտ ստեղծելու համար: Դրանով է բացատրվում վերջին տարիներին արցախյան մամուլում հաճախադիմ բանավեճի ժանրով ներկայացվող լրագրողական նյութերը:

Տարաբնույթ են վենք ներկայացնելու ձևերը: Գրավոր տեքստի շրջանակներում դրանք ի հայտ են զայիս ուղղակի/հակառակորդները նույն կամ տարբեր պարբերականների էջերում հենրում են միմյանց տեսակնետները, մեկ և ավելի հրապարակումներով/ և անուղղակի / այս դեպքում ակտիվ է կրղմերից մեկը, մյուսի պատասխանը չի ակնկալվում/ բանավեճերի տեսքով: Անուղղակի դրասորումներից մեկն էլ, որ հաճախ ենք հանդիպում մամուլում, նույն հրապարակման ներսում «ներքանավիճային իրադրության ստեղծումն է, երբ հեղինակն ընդդիմադիր կողմից փաստարկները սեփական բառերով շարադրում, ապա հերքում է իր կարծիքով «առավել տրամարանական» հակափաստարկներով»: (2, էջ 20)

Վեճերն ունեն տարբեր դասակարգումներ: Օրինակ Ս.Պովարնին առաջարկում է հետևյալ տարբերակները՝ ա/վեճ ծամարտությունը բացահայտելու նպատակով, թ/ վեճ, որի նպատակը հակառակորդին համոզելն է, զ/ վեճ հանուն վեճի, դ/ վեճ հակառակորդին անպայման հաղթելու նպատակով, ե/ վեճ-խաղ կամ վեճ-վարժություն: (4, էջ 22-25)

Բանավիճային տարբեր պարունակող հրապարակումներ տպագրվել են դեռևս հայ առաջին պարբերականի «Ազդարաբի» էջերում: «Ենտագուտողների կարծիքով՝ Շմավոնյանը կամ նրա «անմիջական զինակիցներից մեկը»՝ «Հայորդի Հայ» և «Ազգակից» կեղծանուններով, փորձել են բանավեճել միմյանց հետ, բայց այդ հոդվածները ոչ այնքան բանավեճ, որքան բանավեճի պատրանք են ստեղծում: Երկուսն էլ լուսավորական շարժման ջատագովներ են, սկզբունքային առարկություններ չունեն և տողորված են ընդհանուր մտահոգությամբ: «Նրանք վիճում են, բայց վերջիվերջո համաձայնում են միմյանց հետ ու որոշակի կերպով ծայնակցում են միմյանց»: (1, էջ 22)

Գրավոր վեճերի միջոցով կարելի է ինչպես բացահայտել ծամարտությունը, այնպես էլ հայտնվել անելաննի փակութու մեջ: Երկու դեպքում են տվյալ իրավիճակի ստեղծողներն իրենք՝ բանակովի հեղինակներն են: Հայտնի իրողություն է, որ բանավիճում են զաղափարական տարբեր դիրքորոշումներ ունեցող պարբերականները: Սակայն մեր տարածաշրջանի տպագիր թերթերի սակափությունն ու տպագրվող թերթերի պարբերականությունը բանավիճող կողմերին հնարավորություն չի տալիս միշտ նույն տպագիր օրգանների հասցեներից պատասխան բանակիցներ փարել: Եվ բնականաբար, ընթերցողներն ստիպված են լինում հետևել տարբեր լրատվամիջոցներում տպագրվող պատասխան հոդվածներին ու արձագանքներին: Թերևս նույնը կարելի է ասել նաև հրապարակումների բանակի ու քննարկվող թեմայի ընդլայնման մասին: Մեր օրերում «Երկաթը տաք վիճակում ծեծելու» դատողությամբ տպագրված պատասխան հոդվածների բազմաթիվ օրինակների կարող ենք հանդիպել:

1990-2000 թթ. արցախյան մամուլի ծևակորման ու կայացման շրջանը, թեև հարուստ չէ բանավեճներով, սակայն ընդհանուր միտումներ կարելի է նկատել: Արցախյան պարբերականների էջերում հանդիպում ենք մշակույթի տարբեր ոլորտներին անդրադարձող բանավիճային նյութերի, մասնավորապես դրանք գրական բանավեճերն են: Կառուցվածքային առումով բանավիճային մողենների հանդիպում ենք տեղական մի շարք պարբերականների էջերում:

Փորձնաք ներկայացնել վերջին տասնամյակի թերթային մշակութային բանավեճերի մի բանի ընթացակարգեր՝ «Դեմո» հանրային թերթի և Ստեփանակերտի պետական դրամատիկական թատրոնի գեղենկավարի՝ Լեռնիդ Հարությունյանի հետ ու «Դեմո»-ի էջերում կայացած Աշուտ Սարգսյանի և Սամվել Քոչարյանի բանակոփները: Երևոյթն, ինքնին շատ հետաքրքիր էր երկարատև քննարկումներից զորկ մամուլի համար, որի մասին են վկայում ոչ մեկանգամյա անդրադարձներն ու արձագանքները, և իհարկե, տարբեր լրագրողների հեղինակությամբ շարադրված լինելու փաստը:

Հյատնի է «Դեմո» հանրային թերթի մշակույթի բաժնի լրագրողների և Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի տնօրինության, ավելի կոնկրետ՝ գեղարվեստական դեկավար Լ. Հարությունյանի հետ բանավեճը: «Ստեփանակերտի դրամատիկին պետք չե՞ն երիտասարդ կադրեր» վերնագրով հոդվածը մեծ իրարանցում առաջացրեց, բացին բազմաթիվ փակագծեր՝ ընթերցողին ստիպելով մտածել այն հարցի շորջ, որ վերջին մի բանի տարիների ընթացքում Ստեփանակերտի դրամատիկական թատրոնում երիտասարդ դերասանների կորուստ կա, այնինչ նրանց պակասն անթաքույց է: Հոդվածի հեղինակը՝ Ստեփանտիրամթատրոնի նախկին աշխատողը, երիտասարդ դերասանուին հարցնում է՝ «Ինչպե՞ս հասկանալ այս հանգամանքը, գուցե՛ Ստեփանակերտի դրամատիկին պետք չե՞ն երիտասարդ կադրեր, գուցե՛ մեր թատրոնը զարգացման ա՞յլ ուղի է ընտրել, գուցե՛ երիտասարդացումը այն ցանկալի ուղին չէ, որ պետք է նախընտրի մեր թատրոնը, և ինչպե՞ս բացատրել այն մենիշխանությունը, որ արդեն բանի տարի տիրում է թատրոնում, և որի վրա արդեն բանի տարի համառոքն աչք են փակում վերադաս մարմինները՝ մասնավորապես կՄՄ նախարարությունը»: (3, 2005թ, ապրիլի 30, «Ստեփանակերտի դրամատիկին պետք չե՞ն երիտասարդ կադրեր», հեղինակ՝ Նունե Մելքոնյան) Եվ ըստ հոդվածագրի ամեն ինչ սկսեց նրանից, որ թատրոնում սկսվեցին ծածուկ փորձենր իրականացվել իինզ դերասանների հետ Ավատրալիա մեկնելու համար, որոնց կազմում էր նաև ինքը՝ հոդվածի հեղինակը: Սակայն՝ «...այդ ժամանակ առաջացավ լուրջ պրոբենմ, որ խոշընդոտում էր իմ զնայուն: Ուստի նախրան փաստաթղթերը պատրաստելը, ես իրաժարվեցի մեկնել Ավատրալիա: Ու սկսվեց...»: (3, 2005թ, ապրիլի 30, «Ստեփանակերտի դրամատիկին պետք չե՞ն երիտասարդ կադրեր», հեղինակ՝ Նունե Մելքոնյան)

Պատասխան հոդվածը տպագրվում է «Դեմո» թերթի հաջորդ համարում «Ներդրում ունենանք, հետո քննադատենք» վերնագրով, որտեղ ակնհայտ վրդովմունք ու դժգոհություն կա ոչ միայն հոդվածագրի՝ իրենց նախկին աշխատակցի, այլ նաև «Դեմո» հանրային թերթի խմբագրակազմի նկատմամբ. «Հարգելի «Մշակույթի բաժնը» կարծում եմ, մինչև այս կամ այն փաստի իրապարակումը, չէր խանգարի, եթե տեղեկանայիր, թե՛ որրանով է այն ստույգ ու հավաստի, մանավանդ, որ խմբագրության և թատրոնի միջև նկած 15-18 ժամն անց է կացնում թատրոնում: Կցանկանայի իմանալ. այս նյույթը տպագրելով, դուք զգտել եք ձեր թերթում նման «պրոբենմատիկ» հարց իրապարակե՞լ, թե՞ պարզապես լրացնել թերթի ազատ մնացած վանդակը: «Հոդվածի հեղինակը նախորդ հոդվածի հավականականներն է բերում և բացատում Ն. Մելքոնյանի դժգոհությունը թատրոնի գեղենկավարի նկատմամբ, հորդորելով «Դեմո»-ին. «Համոզված եմ, եթե՛ «Դեմո» թերթի «Մշակույթի բաժնը» պատասխանառուն զոնե տարին երկու անգամ զա թատրոն ներկայացում դիտելու (առանց իրավասումնի) երրեք չէր հանդուրժի Ն. Մելքոնյանի նման պահկածքը և նրա գրապատություններին չէր արձագանքի հածույրով»: (3, <http://www.demo-nk.org/archive/arm/2005/11.htm>, «Ներդրում ունենանք, հետո քննադատենք», հեղինակ՝ Սուսաննա Գաբրիելյան)

Նոյն հոդվածի տակ «Դեմո» հանրային թերթի մշակույթի բաժինը պատասխանում է նախորդ հոդվածին՝ «Ի գիտություն հոդվածագրի, նաև նշենք, որ մենք ինքներս, հատկապես մեր «Մշակույթի բաժնը», լավ գիտենք թատրոնի տեղը, գուցե՛ ավելի լավ, քան ինքը՝ հեղինակը, և զիտենք ոչ միան տեղը, այլ նաև այն, թե ինչն են կատարվում թատրոնում արդեն բանի տարի»: (3, <http://www.demo-nk.org/archive/arm/2005/11.htm>, «Պարտադրված ենք պատասխանել», Մշակույթի բաժնը) Անդրադառնալով հոդվածագրի մտահոգությանը, թե՛ տարեկան քանի անգամ է թերթի «Մշակույթի բաժնը» այցելում թատրոն, «ապա խորհուրդ կտայինք ներկայացումից առաջ տեղ գրավել թատրոնի հակիչ տիկինն Լիդայի կողքին և ստուգել մեր տումները: Իմիջիայլոց հիշեցնենք, որ «Դեմոն» միակ թերթն է մայրաքաղաքում, որ ներկա է լինում հանրապետությունում տեղի ունեցող բոյոր միջոցառումներին ոչ թե իրավասումսով, այլ՝

տումսով»: (3, <http://www.demo-nk.org/archive/arm/2005/11.htm>, «Պարտադրված ներ պատասխաննել», Մշակույթի բաժին)

Ավելի քան հինգ համարներում անդմնջ ծավալվող բանավեճն ավելի ու ավելի էր թե՛նժանում, զրի երես էին զալիս նոր փաստարկներ ու ապացույցներ:Եվ շուտով թե՛րթի հերթական համարներից մեկում հանդես է զալիս Լ. Հարությունյանը ««Դեմո» թերթի զիսավոր խմբագիր պրն Գ. Բաղդասարյանին» նամակ-հոդվածով, որտեղ ասվում է՝ «Ձեր թերթի 30 ապրիլի 2005թ. թիվ 8 (27)-ում տպագրված «Ստեփանակերտի դրամատիկին պետք չե՞ն երիտասարդ կադրեր...» հոենտորական հարցադրումով հոդվածի մեջ թերթած «փաստերն» ու նաև հետզրության մեջ, մեղմ ասած, անպատասխանատու նզրահանգումները թողնելով Ձեր ու Ձեր թերթի մշակույթի բաժնի խղճին, ասեմ միայն հարկավոր էր գրելուց առաջ նախ ճշտել նղած փաստերը, լսել երկրորդ կողմին, ինչը չեք արել, ինտո լինել ամկողմնակալ և ազնիվ նզրակացույցուններում, ինչը չկա Ձեր տպած նյույթում»: (3, <http://www.demo-nk.org/archive/arm/2005/11.htm>)

Տեսադաշտում ունենալով ««Դեմո» հանրային թերթի էջերում ի հայտ նկած բանավիճային տարատեսակների առաջացումը (ասույններ, քննարկումներ, հոդվածներում արտահայտված հակադիր մոտեցումներ և այլն), փորձենք ներկայացնել բանավիճային միջակայրի մեկ այլ դրսերում մեզ հուզող հիմնախնդրի շրջանակներում:

Բանավեճի շարժադիրը ««Դեմո» հանրային երկշաբաթենրթում տպագրված Աշուն Սարգսյանի ««Մեր լեզուն մեր հայրենիքն է» հոդվածն էր, որտեղ հենդինակը խոսելով լեզվապահպանության դերի մասին, հայեցի գոյության հիմքերը համարում է՝ «հայ ընտանիքը, հայ լեզուն, հայ դպրոցը, հայ եկեղեցին»: Սակայն ափսոսանքով փաստում է, որ 1996 թ. մարտի 20-ից ԼՂՀ-ում գործող «Լեզվի մասին» օրենքը ըստ արժանակույն Արցախում չի գործում: Զնայած քնակչության գերակշռող մասը հայեր են, որոշ հիմնարկների գուցանակերին շարունակում են մնալ ուսերեն գրություններ. «Մայրաքաղաքի ավտոկայանը դեռ շարունակում է օգտագործել անցյալ դարից ժառանգած ուսերեն ցուցանակներ՝ ուղևորների վրա թողնելով ուսական աղքատ խուսորդի ավտոկայանի տպագրություն»: (3, <http://demonewspaper.com/2005-3/demo-n3-feb-2005/>)Եվ որպես զիսավոր պատճառ հոդվածագիրը նշում է. «Արցախում հայոց լեզվի նկատմամբ չկա հասուկ մշակված ռազմավարություն, ազգային-պետական հստակ մոտեցում»: (3, <http://demonewspaper.com/2005-3/demo-n3-feb-2005/>)

Թփում է Ա. Սարգսյանի գրած հոդվածում ոչինչ սխալ ու անտեղի չի գրված: Սակայն գտնվեց նաև զաղափարական այլ դիրքորոշում ունեցող բանավիճող կողմ: "Не յայսակած առաջարկություն ունեցող բանավիճությունը կատարված է առաջարկություն ունեցող բանավիճությունից հետո առաջարկությունը կատարված է առաջարկություն ունեցող բանավիճությունից հետո": (Վեյնինգեր) Այս քնարանով է սկսվում Սամվել Քոչարյանի պատասխանը Աշուն Սարգսյանի ««Մեր լեզուն մեր հայրենիքն է» հոդվածին, որտեղ հենդինակը սխալ է համարում Ա. Սարգսյանի՝ մայրենի լեզվի նկատմամբ «ազգայնամոլական նման մոտեցումը» և նշում, որ ««Ղարաբաղի քնակչության գերակշռող մասը ուսալեզու են, համարական ավտոկայանը և որ «երկու հայկական հանրապետությունների նախագահները ևս ունեն ուսական կրթություն»». (3, <http://demonewspaper.com/2005-3/demo-n7-march-2005/>)

«Դարձյալ մայրենիի դեմ՝ այս անգամ՝ ող մասունք պամֆլետում Վ. Օվյանը Ս. Քոչարյանի հոդվածի մասին գրում է. «Պատասխան այս հոդվածում սկզբից մինչև վերջ կարմիր թե՛լի պես անցնում է ատելությունը մեր մայրենիի (որը զամարտի կարմիր շորի պես հաճախ, մեղմ ասած, նյարդայնացնում է ուսանց) և հայերի դեմ: Եվ քնականաբար ես փորձեցի պարզել հոդվածագրի ազգությունը: Յ ա շ ե, ա ր մ յ ա ն ի ն, - ի ր մ ա ս ի ն ա ս ո ւ մ է հ ե ն դ ի ն ա կ ը: Պ ր պ ո ն ց ի ի մ ծ ե ռ ո ր ի տ ա կ ն դ ա ս տ ա կ ա ն դ ե ր ը և ն ա խ ս ա գ ա հ ե ն ե ր ը և ս տ ա ն ո ւ մ է ի ն հ ա յ ե ն ի շ ի ք ի ք ր ո ւ թ յ ո ւ ն»: (3, <http://demonewspaper.com/2005-3/demo-n7-april-2005/>)

Հոդվածագիրը մեկ առ մեկ կանգ է առնում Ս. Քոչարյանի առաջ քաշած փաստարկների վրա, Ժխտում դրանք և բերում իր հակափաստարկները՝ «Նա հայտարարում է, թե՛ Արցախում, համարական Ստեփանակերտում գերակշռում են ուսալեզու մարդիկ: ... Նոյնիսկ կորկովան տարիներին մայրաքաղաքի աշակերտության առնվազն 70 տոկոսը ստանում էին հայեցի կրթություն»: (3, <http://demonewspaper.com/2005-3/demo-n7-april-2005/>)

Բանավեճում ընդրիմադիր կոլյմերը տարակարծություններ են հայտնում նաև հայրենիքի ու հայրենասիրության վերաբերյալ: Իր հոդվածում Ս. Քոչարյանը գրում է, որ «հայրենասիրությունը դա սիրո զգացում է Հայրենիքի, սեփական ժողովրդի հանդեպ, այլ ոչ թե՛ նրա մի մասի» (3, <http://demonewspaper.com/2005-3/demo-n7-march-2005/>) և այս դեպքում Ա. Սարգսյանին համարում «նացիոնալիստ»: Եվ Վ. Օվյանը պատասխանում է. «Հայրենիքն էլ իր հերթին ոչ միայն

գեղեցիկ լեռներն ու ծաղկածիծաղ դաշտերն են..., այլ այլ տարածքում ապրող ժողովրդի ազգային լեզուն ու մշակույթը, ազգային ոգին ու կերպը»: (3, <http://demonewspaper.com/2005-3/demo-n7-april-2005/>) Առանձնակի բժամնդրությամբ հոդվածագիրները անդրադառնում են հատկապն «ուսերենի՝ որպես երկրորդ պետական լեզվի ընդունման» առաջարկին: Այս առումով բնորոշ է Վ. Օվյանի գնահատականը. «Գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր բարեկիրք մարդ, մայրենի լեզվից բացի, պետք է կանոնավոր տիրապետի առնվազն մեկ այլ լեզվի: Չիմանալ մայրենի լեզուն և միայն ուսերենով աջ ու ձախ հոլորտալը տկարամություն է»: (3, <http://demonewspaper.com/2005-3/demo-n7-april-2005/>)

Բանախոսների ելույթների ենթատերստերում շարունակում էր առաջնային մնալ ազգային մշակույթի վաղվա օրը: Մեկ այլ համարում ազգային ինքնորոշման կարևոր նախապայմաններից մեկը նշելով մայրենի լեզուն, «որպես երիտասարդության ներկայացուցիչ» հոդվածագիրը դիմում է «հայազգի ուսախոս երիտասարդին». «Ժարկ եմ համարում հիշեցնել հեղինակին, որ մենք վաղուց հրաժեշտ ենք տվել խորհրդային կարգերին և ապրում ենք Լեռնային Ղարաբաղի հանրապետությունում, որի շճանաչված կարգավիճակը պահանջում է բնակչության ազգային մտածելակերպի դրսուրում:... Գոնե այսօր, երբ աշխարհով մեկ սփրասած հայերը հայ գրերի գյուտի 1600-ամյակ են տոնում, ստեղծված են պետական տեսչություններ հայոց լեզվի մշակման և կատարելագործման համար, մեղմ սասած, տեղին չէ խոսել այլ լեզվի նշանակության մասին»: (3, <http://demonewspaper.com/2005-3/demo-n8-april-2005/>)

Երկար բանավեճերից հետո «Դեմո» հանրային թերթը, տպագրելով Ս. Քոչարյանի «*Армянин! И это для меня немало*» վերտառությամբ հոդվածը, վերջակնտ է դնում երեք ամիս շարունակվող բանավեճին: Հակառակորդի վիրավորական բնութագրումներին Քոչարյանը անդրադառնում է առանց խուճապի մատնալու, կրկին պաշտպանում է իր գաղափարական դիրքորոշումը, բայց այս անգամ ծանրանում է «իր հայրենասեր լինելու» արժանիքի վրա. «*Мне хотелось бы довести до сведения В. Овсяна, что свою нацию я люблю не меньше него (если не больше), к тому же сам готов встать на пути любому, кто осмелится хоть как-то посягнуть на армянский язык, его национальную культуру, его традиции, поскольку по крови и плоти я Армянин*» (3, <http://demonewspaper.com/2005-3/demo-n9-may-2005/>)

Եվ «*От редакции*» բաժնում խմբագրակազմը գրում է. „На данную тему мы опубликовали достаточно много материалов самых разных авторов, представляющих различные точки зрения. Дискуссию считаем завершенной, потому что соответствующие структуры имели возможность ознакомиться с мнениями общества по данной проблеме. Дальше уже дело - за ними.” (3, <http://demonewspaper.com/2005-3/demo-n9-may-2005/>)

Ուշագրավ է, որ բանավեճը «Դեմո»-ի էջերում տպագրվելով շահմանափակվեց և շուտով «Ակունք» թերթի էջերում և հայտնվեցին միանգամայն նոր փաստարկներով ու բնորոշումներով բանավիճային բնույթ կրող բնադրատական հոդվածներ, որտեղ արցանցի մտավորականները 1600-ամյա պատմություն ունեցող հայոց ուսկերենիկ լեզվի նկամամբ մեղանչումը աններենի էին համարում: Եվ տարբեր տպագիր թերթերի էջերից նրանք արտահայտում էին իրենց վրդովմունքն ու ըսդդիմությունը, գրում բաց նամակներ Ս. Քոչարյանին («Ակունք» 8 (8-27 մարտի, ապրիլ 2005թ., էջ 8 «Պատավասանի իրավունքով» խորագրի տակ, հեղինակ՝ Կարեն Միքոնյան, «Սովորականության մութ գետակում՝ մանր թիվակներով ուր են զնում, մոլորդ ներայի», «Ակունք» # 13 , էջ 9 Վ. Օվյան «Սեփական երկիրը չեն կիսում»)): Ս. Խաչատրյանն իր «*Ониарцаңգու ցուցանակները աչք են ծակում*» հոդվածում տեղին է համարում Ս. Սարգսյանի մտահոգությունները «[Լեզվի մասին] օրենքի վերաբերյալ, «Արցախահայությունը ուրիշ է եղի իր ազգային դեմքը անխաթար պահելու համար, իսկ ի՞նչ ազգ ու ազգային մասին կարող է խոր լինել՝ առանց ազգային լեզվի»: (3, <http://demonewspaper.com/2005-3/demo-n7-april-2005/>)

Շուտով բանակովի վերջակնտ տրվեց նաև «Ակունք» թերթում («Ակունք» # 13 , էջ 9 Վ. Օվյան «Սեփական երկիրը չեն կիսում»). «... Սամվել Քոչարյանին պարզապես խորհուրդ ենք տալիս վերընթերցել Շաբթու «Սամվել» վեպը»:

Ուսումնաամբությունները փաստում են, որ տպագրական տարածքն լրագրողների ու բանավիճող կողմերի կողմից ոչ միշտ է նպատակային օգտագործվում: Եվ չնայած SSS համաշխարհային ընդլայնմանը, չնայած տեղեկացված հասարակության արևմտյան մողելի արդյունավետությանն ու բազմակարծության բնականոնությանը արցախյան մամուլը փակ է

այսօրինակ ձեռքբերումների առջև։ Արդյունքում ստացվում է, որ մեր մամուլը մերթ մերժում է այլակարծությունը, մերթ ինքնադրսնորվում որպես ինքնուրույն, կայացած ինստիտուտ։

Հայ հասարակական-քաղաքական, ազգային մտքի ու մտածելակերպի արծարծման ձևն ու բովանդակությունը, մամուլում հարցերի ձևակերպման և պատասխանները գտնվու, եզրահանգումներ կատարելու անկարողությունը վկայում են, որ հայկական իրականության մեջ, որպես կանոն, բանավեճ չի կայանում։ Թե՛ սրանից երկու տասնամյակ առաջ, թե՛ այսօր բանավեճի ժանրով ներկայացված նյութերը «հազերամյակ» անձնական բնույթի վիրավորանքներով, ընդդիմալսոսին հնարավորինս «զետնին հավասարացնելու» միտումով։ Մշակույթի ասպարեզում ծագած յուրաքանչյուր բանավեճ պետք է միտված լինի արդի գրական-մշակութային կյանքի ընթացքի օրինաչափությունների բացահայտմանը։ Բանավեճն ու բննարկվող թեման անձնականացնելով, ընթերցողը հեռանում է քուն թեմայից։ Վերջիվերջո, բանավեճն ոչ թե միջանձնային, այլ գաղափարական հակադրություն է, որ զտված, համոզիչ ու անսասալ փաստարկներով առողջ բանավիճային միջավայր պիտի ստեղծի։

Գրականություն

1. Ա.Բ.Լարինյան, «Ակնարկներ հայ պարենրական մամուլի պատմության», հատոր 1,Ե.,Հայկ. ՍՍՈՒ ԳԱ հրատ.,1956, էջ 221:
2. Դ. Վ. Պետրոսյան «Գրական բանավեճերը 20-րդ դարասկզբի հայ մամուլում», Երևանի համալս. հրատ., 2007 թ., էջ 20:
3. «Դեմո» հանրային երկշաբաթաթերթի էլեկտրոնային արխիվ:
4. С. И. Поварнин, Спор. О теории и практики спора, ПГ., 1918, с. 22-25.

Дискуссии в области культуры в панораме арцахской прессы.

III.Р.Аскарян

Резюме

В статье рассматриваются, анализируются и оцениваются культурные дискуссии в арцахской прессе. Автор приходить к выводу, что часто местное медиапространство не используется целесообразно и в результате дискуссии читатель удаляется от основной спорной темы. Так же отмечается, что культурные дискуссии часто носят индивидуальный характер.

Cultural discussions in the panorama of Artsakhi periodicals.

Sh.R.Askaryan

Summary

The article deals with the cultural discussions of Artsakhi periodicals, analyzes and estimates it. The author comes to the conclusion that usually local media space is not used properly and the reader is carried away from the main disputable subject. It's also noted, that cultural discussions often have personal character.